

ՀԱՅՐԵՆԻՔ

ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ



Շաբաթ 01 Օգոստոս 2020 - Թիվ 22

Հրատարակչություն՝

Արեւմտեան Հայաստանի Հանրապետական
Նախարարություն

Հետադարձ կապ
contact@western-armenia.eu

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջին էջ	1
Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւն	2
Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Կառավարութիւն	4
Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարան)	9
Միջազգային - Կրթութիւն եւ գիտութիւն	10
Վերջին էջ	



ՀԱՅՐԵՆԻՔ

ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ



Շաբաթ 01 Օգոստոս 2020- Թիվ 22

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Տեղեկութիւններ

Մենք պատրաստ ենք հայրենիքի համար օրհասական պահին առանց վարանելու մեկնել առաջնագիծ



ԱՐՑԱԽ — ԱԱՄ(Արցախի ազատամարտիկներու միութիւն) Մարտակերտի տարածքային կազմակերպութեան անդամներս կը դիմենք Արցախի ազատամարտիկներու միութեան նախագահ գեներալ — մայոր Սամուէլ Կարապետեանին՝ կապուած Տաւուշի մարզի մէջ հակառակորդի կողմէ կատարուող ոտնձգութիւններուն ՀՀ սահմաններու հանդէպ, մեր պարտքը կը համար ենք ցանկացած պահ մեկնիլ ՀՀ եւ ԱՀ ցանկացած սահմաններու հատուած ,մեր փորձն ու կարողութիւնները ներդնելու հայ ժողովուրդի եւ Հայաստանի անվտանգութիւնն ապահովելու համար:

ԱԱՄ Մարտակերտի տարածքային կազմակերպութեան նախագահ՝ Գրիգորի Միրզոեան

ԱՀ Կառավարութեան որոշում՝ 2020 թուականի Յուլիս 3-ին

Արդեն երրորդ անգամ է, ինչ Գառնիկ Սարգիսեանը, գրագողութեամբ կգբաղուի՝ օգտագործելով Արեւմտեան Հայաստանի լոգոները, գծանկարները եւ լուսանկարները՝ հայ բնակչութեան նկատմամբ իր անձնական եւ ապօրինի գործունեութեան նպատակով՝ հակառակ գնալով մտաւոր սեփականութեան օրէնսդրութեանը:

Իր «Հայրենիք» պաշտոնաթերթին մէջ, որը ոչ աւելի, ոչ պակաս, կը կրէ Արեւմտեան Հայաստանի Պաշտօնական հանդէս անունը, Գառնիկ Սարգիսեանը կօգտագործէ ապօրինի ձեւով եւ համացանցի մէջ սեփականութեան իրավունքը չի յարգելով, արդեն երրորդ անգամ անընդմէջ, որտեղ յայտնուած են յետեւեալ անունները՝

Կարօ Արմենեան (ԱՄՆ)

Վազգէն Սիսլեան (Լիբանան)

Սամուէլ Կուցանեան (Հայաստան)

Վաչէ Ակոբեան (Լիբանան)

Նախքան Արեւմտեան Հայաստանի եւ անոր Ազգային խորհուրդի իրավունքները հաւաստող եւ պաշտպանող բոլոր ընթացակարգերը, Նախագահ Արմենակ Աբրահամեանը պաշտօնապէս կը խնդրէ տուեալ անձերուն, դատապարտել իրենց ինքնութեան ապօրինի օգտագործումը հետեւելով մասնաւոր յայտարարութիւններուն եւ այս ցանկին՝ կեղծօրէն պատրաստուած Գառնիկ Սարգիսեանի կողմէ (ինքնութեան գողութիւն, անձի արժանապատուութեանը, ինքնութեանը եւ պատուին վնաս հասցնել) – Նամակը պետք է ուղարկել՝ contact@western-armenia.eu

Եթէ մէկ շաբթուայ ընթացքին այս դատապարտումը չի հասնի Արեւմտեան Հայաստանի կառավարութեան ներքին գործերու նախարարութեան, բոլորն իրենց գործողութիւններու եւ գործունեութեան մասին կը ներկայացնեն համապատասխան եւ իրավասու մարմիններուն:

Արեւմտեան Հայաստանի Կառավարութեան Ներքին Գործերու Նախարարութիւն

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւն

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ի Ֆիշատակ՝ Մանուկ Սահակեան-ին որ ինկած է Պատուոյ Դաշտին



Ազատագրական Բանակ-ը մէկ կորին եւս կորսնցուց:

1992 թուականի Հուլիսի 27-ին, Մոխրաթաղի բարձունքներու վերագրաւման համար մղուող թեժ մարտերու ժամանակ զոհուեցաւ ՄԱՆՈՒԿ ՍԱՐԳԻՍԻ ՍԱՀԱԿԵԱՆԸ (ՄԱՆԶ):

Հրամանատար Լեոնիդ Ազգալդեանի քաջ սանը, ջոկատի յարգուած ազատամարտիկը, որը միշտ աչքարու էր արծիւի նման շէշտակի ու անվրէպ հարուածներով:

Իր վերջին մարտին Մանուկը իր մարտական ընկերներուն հետ անակնկալի է բերում մեծաքանակ թշնամիին անցնելով գրոհի, մարտը կաւարտուի մեր զինվորներու յաղթանակով, սակայն յաղթանակի բերկրանքը չի ճաշակում թշնամիում դավադիր գնդակէն զոհուած Մանուկը: Ան ապրեցաւ ընդամենը 23 տարի:

Նախագահ Արմենակ Աբրահամեանն ըսած է .

«Մանուկը ինկած էր ինձմէ մի քանի մետր հեռաւորութեան վրայ, ես երբեք չեմ մոռնար Մանուկին»:

<https://www.youtube.com/watch?v=Ng97rd3oOP8&feature=youtu.be>

Արեւմտեան Հայաստանի Կառավարութիւն
Կրթութիւն եւ գիտութիւն

Լոյս տեսաւ Հայկական Դպրոցներուն համար «Հայոց Պատմութիւն » դասագիրքը



Էջ 8

Օր մը բոլորս պիտի վերադառնանք. ծպտեալ հայերն ու Արմեն Բաքըրջըօղլուի հայկական ընտանիքը



Ձեզի կը ներկայացնենք Նայիրի Հոխիկեանի եւ Սպուտնիկ Արմենիայի համատեղ ծրագիրը, հողուածի հեղինակը կանրադառնայ Արեւմտեան Հայաստանի մէջ ապրող հայերուն:

Թուրքական ժողովրդագրական ծառայութիւններու տուեալներով՝ հայերուն վերագրուող 02 կողը կրող մարդկանց թիւը Ատլայմանի մէջ կը գերազանցէ 40.000-ը, այսինքն՝ մոտ 15 տոկոս:

Երբ կը խօսինք Արեւմտեան Հայաստանի հայերու մասին, առաջին պատկերացումը, որ կունենայ հայկական լսարանը, Մուշի, Ալաշկերտի, Սասունի կամ Կարսի մէջ իր ազգային ինքնութիւնը պահող հայերու մասին է:

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Կիլիկիոյ ազատագրումէն ետք ... Ֆրանսիայի կողմէ մերժման առաջին գործողութեան Յարկւրամեակը



ԿԻԼԻԿԻԱ — 1916 թ. Նոյեմբերի 15-ին ստեղծուեցաւ արեւելեան լեգեոն, որը բաղկացած էր հիմնականը Մուսա լեռան հայ փախստականներէն, որոնց հիմնական նպատակն էր.

1°-Այն, որ Արեւելեան լեգեոնի սահմանադրութեան նպատակն էր, որպէսզի հայերը նպաստէին Կիլիկիայի ազատագրմանը եւ այդպիսով անոնց համար ստեղծուէր ազգային ձգտումներու նոր տիտղոսներ:

2°- Որ հայ լեգեոնները կը պայքարին միայն թուրքերու դէմ եւ միայն Կիլիկիոյ մէջ:

3°- Որ հայկական լեգեոնը ապագային ձեւաւորի հայոց ազգային բանակի կորիզը:

Արեւելեան լեգեոնը (Հայոց ազգային բանակ) պայքարէն, այնուհետեւ Պաղեստինի մէջ մարտնչեց թուրքական բանակի դէմ 1918 թուականի Յունիսէն սեպտեմբեր եղած ժամանակահատուածին, միեւնոյն ժամանակ, երբ Երեւանի հայկական հանրապետութիւնը պայմանագիր կնքեց Թուրքիոյ հետ Բաթումիի մէջ 1918-ի Յունիս 4-ին:


1918-ի Հոկտեմբերի 10-ին Արեւելեան լեգեոնը հասաւ Դամասկոս ` ազատագրուած թուրքական բանակէն:

Կիլիկիան ազատագրուեցաւ Արեւելեան լեգեոնի կողմէ 1918 թուականի Նոյեմբերի 15-ին:

1919-ի Փետրուարի 1-ին Արեւելեան լեգեոնը պաշտօնապէս դարձաւ հայկական լեգեոն (Արեւմտեան Հայաստանի հայկական բանակի հիմնադրման տարեդարձն է): Ցեղասպանութիւնէն փրկուած Կիլիկիոյ հայերը վերադարձան Կիլիկիայ ` անոր վերականգնման մասը ըլլալով:

Արեւմտեան Հայաստանի տարածքին Հայաստանի դէ իւրե ճանաչումէն ետք, 1920-ի Մայիսի 11-ին, եւ Ֆրանսիայի կողմէ Սեւրի պայմանագիրը ստորագրելու արդիւնքին` Կիլիկիայի եւ Արեւելեան տարածքներու մանդատի հիման վրայ (մինչեւ Զամիշի), Ֆրանսիան որոշում կայացուց լուծարել Հայկական լեգեոնը, 1920 թուականի Յուլիսի 1-ին այդ Կիլիկիան թուրք զավթիչին թողնելու առաջին գործողութիւնն էր:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւն



«Առատաձեռն Ֆրանսիան հպարտօրէն կը յիշէ, որ պատիւ ունեցեր է Հայաստանի որդիներուն յանձնել սվիններ, որոնք օգտագործուեցան ոգէտրուածութեամբ:»

Զինադիստական ուժերու կողմէ Զեսապը գրաւելէ ետք, 2014-ի Ապրիլի 24-ին Լաթաքիայի մէջ Նախագահական հրամանագիրով Հայկական լեգեոնը (Հայ) պաշտօնապէս վերահաստատուեցաւ:

https://www.youtube.com/watch?v=gV-DhKP9PNw&feature=emb_logo

«Արեւմտեան Հայաստանը կը ցալի, որ 2018 թուականի Հոկտեմբերի 10-ին չի կարողացաւ տօնել Դամասկոսի Ազատագրման Յարիւրամեակը, որն այժմ Սուրիոյ մայրաքաղաքն է»:

Արմենակ Աբրահամեան

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ

[http://www.western-](http://www.western-armenia.eu/news/Actualite/2017/HISTOIRE_DE_LA_LEGION_D_ORIENT)

[armenia.eu/news/Actualite/2017/HISTOIRE_DE_LA_LEGION_D_ORIENT](http://www.western-armenia.eu/news/Actualite/2017/HISTOIRE_DE_LA_LEGION_D_ORIENT) Presidential Council of the Republic of Western Armenia-19.03.2017.pdf

<http://www.western-armenia.eu/archives-nationales/Cilicie/la-legion-d-orient-1916.pdf>

http://www.western-armenia.eu/news/Actualite/2020/Apres_la_liberation_de_la_Cilicie-01.07.2020.pdf

Նախագահ Արմենակ Աբրահամեանի յայտարարութիւնը



ԱՐԵՒՍՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ — Արդեն չորս օր է, ինչ բախումները կը շարունակուին Հայաստանի Հանրապետութեան (արեւելեան) Տաւուշի մարզի սահմանին:

Բախումներու հետեանքով Հայկական բանակը 4 զոհ ունեցած է, ատրպեյճանական կողմի զոհերը նախնական տուեալներով 12-են:

Տուեալ իրադրութեան մէջ մենք խնդրեցինք Նախագահ Արմենակ Աբրահամեանին ներկայացնելու Արեւմտեան Հայաստանի կողմէ ձեռնարկուելիք քայլերը՝ այս հակամարտութեան համատեքստին:

«Նախ եւ առաջ կը խոնարհուիմ մեր զոհուած զինծառայողներու առջեւ, նոյնիսկ եթէ մենք գիտենք, որ մեր բանակը զօրաւոր է եւ լաւ պատրաստուած, իւրաքանչիւր ինկած զինուորոր մեր բոլորիս կորուստն է:

Հայաստանի Հանրապետութիւնը յայտնուած է իրավիճակի մը մէջ, երբ սահմանափակուել է մարդկանց ազատ տեղաշարժը. նման բան չէ եղած 1991-1994 թուականներու պատերազմի ժամանակ:

Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւնները Ատրպեյճանի կողմէ պատերազմի սկսելուն հետ միաժամանակ սահմանափակումներու որոշումը երկարեցուց:

Այս իրավիճակը դժուար է յատկապէս Արցախեան պատերազմի աւագ սերունդի համար:

Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւններու համար առաջնահերթութիւն պէտք է ըլլայ, հնարաւորութեան դէպքին հանրապետութեան տարածքին արտակարգ դրութեան որոշակի սահմանափակումներու վերանայում, որը թոյլ կուտայ մարդկանց՝ այդ թիւին Արցախեան պատերազմի մասնակից աւագ սերունդին կատարել այն ամենը, ինչը իրենք պէտք է կատարեն:

Անշուշտ, այսօր զարգացած են տեխնոլոգիաները, կան կապի միջոցներ, դիտորդական գործիքներ, որոնք շատ արդիւնաւէտ են, բայց մեր երկիրը չի կրնար առանց յատուկ նշանակութեան ուժերու՝ որոնք շատ աւելի պատրաստուած եւ փորձառու են, քան Ատրպեյճանցի զինուորականները անկախ տարիքէն:

Այս պատերազմը մեր պայքարն է, մենք ընտրած ենք մեր ուղին՝ պաշտպանել մեր հայրենիքը եւ մեր ժողովուրդին, այնպէս որ մենք կը շարունակենք:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւն

Հնարաւոր Է զենքով որոշել Հայաստանի ու Ատրպեյճանի արեւելեան սահմանը



ԱՐԵՎՍՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ — Սեւրի Դաշնագիրի հարիւրամեակին մոտենալով, 2020 թ. Յուլիսի 12-ին, Ատրպեյճանը որոշեց յարձակուիլ Արեւելեան Հայաստանի վրայ՝ «Արեւմտեան Ատրպեյճան» կազմելու յայտարարուած նպատակով, անդելով, որ Արեւելեան Հայաստանի տարածքը իր տարածքային ամբողջականութեան մէկ մասն է:

Փաստօրէն, «Արեւմտեան Ատրպեյճան» հռչակումը (առանց որեւէ իրաւական հիմքի) ոչ այլ ինչ է, քան Ատրպեյճանի մէջ այսօր կիրառուող Արեւմտեան Հայաստանի գոյութեան գրագողութիւն:

Այնուամենայնիւ, Սեւրի Դաշնագիրի 92-րդ հոդուածին մէջ յստակ նշուած է Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ արեւելեան սահմանի դիմիտացիայի վերաբերեալ:

Հոդուած 92. Ատրպեյճանի եւ Վրաստանի հետ Հայաստանի սահմանները ըստ պատկանելոյն կորոշուին շահագրգիռ պետութիւններու ընդհանուր համաձայնութեամբ:

Երբ 89-րդ հոդուածին մէջ նախատեսուած որոշումն արդէն ընդունուած կըլլայ, եւ եթէ անոնցմէ ետք այս կամ այն շահագրգիռ պետութիւնները չի կարողանան ընդհանուր համաձայնութեամբ որոշել իրենց սահմանագիծը, վերջինս կորոշեն գլխաւոր դաշնակից տերութիւնները, որոնք անոր հետ միասին պետք է հոգան սահմանազատումը տեղւոյն գծանշելու մասին:

89-րդ հոդուածին մէջ նշուած է որոշման ամսաթիւը՝ 1920 թուականի Նոյեմբերի 22-ը, այն օրն է, երբ Նախագահ Վուդրոյ Վիլսոնը ստորագրեց Իրավարար Վճիռը՝ որոշելով Թուրքիոյ եւ Արեւմտեան Հայաստանի միջեւ սահմանը:

Այսօր հիմնական դաշնակից տերութիւնները խմբաւորուած են ԵԱՀԿ Մինսկի խումբի շրջանակներուն, այնտեղ են ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Ռուսաստանը, Նաեւ Գերմանիան, Բելառուսը, Ֆիլիպինները, Իտալիան, Նիդերլանդները, Պորտուգալիան, Շուեդիան, Թուրքիան, ինչպէս նաեւ Հայաստանը եւ Ատրպեյճանը: (13 պետութիւն)

Այս ցանկին մէջ Սեւրի պայմանագիրի ուժի մէջ մտնել անմիջականօրէն շահագրգիռ պետութիւններ են ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Ռուսաստանը, Իտալիան, Պորտուգալիան, Թուրքիան, ինչպէս նաեւ (Արեւելեան) Հայաստանը եւ Ատրպեյճանը (8 պետութիւն):

Այս պետութիւնները, հետեւաբար, երկարաժամկետ պարտաւորութիւն ունին որոշում կայացնել Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ արեւելեան սահմանի հարցով, քանի դեռ Ատրպեյճանը Հայաստանի դէմ ռազմական գործողութիւններ կը ձեռնարկէ՝ ՄԱԿ-ի կանոնադրութեան խախտմամբ: Հարկ է նշել նաեւ, որ միջազգային քրեական դատարանի կանոնադրութիւնը նոյնպէս կը համարէ որպէս պատերազմական յանցագործութիւն. «Հարձակման դիտաւորեալ գործարկումն այն գիտակցութեամբ, որ նման յարձակումը կը հանգեցնէ մարդկային կեանքի կորուստի կամ քաղաքացիական անձերու պատահական վնասուածքի, ընդհանուր կամ քաղաքացիական կոյքային վնասի, բնական միջավայրի երկարաժամկետ եւ լուրջ վնասի, ակնհայտօրէն աւելորդ կըլլայ համարել ռազմական առաւելութիւն:» (յոդուած 8.2 բ (iv));

Մինսկի խումբի համեմատաբար մոտ ապագայի վերաբերեալ որոշումներն Արեւելեան Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ սահմանի հարցի շուրջ անմիջական հետեւանքներ կունենան Նախիջեւանի տարածքի կարգավիճակի հարցի վերաբերեալ:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւն



Արեւմտեան Հայաստանը, որը վավերացուցած է Սելիի պայմանագիրը 2016 թուականի Հունիսի 24-ին, ուղղակիօրէն կապ ունի 1920-ի Օգոստոսի 10-ին Սելիի ստորագրուած Խաղաղութեան միջազգային պայմանագրի ուժի մէջ մտնելու հետ, բայց ընդգրկուած չէ Միսսկի խումբի մէջ:

Պատմական հարցի վերաբերեալ, չնայած որ Սելիի պայմանագիրը վավերացուած չէր, տերութիւնները, այնուամենայնիւ, որոշեցին, որ կը շարունակեն հաշուի առնել անոնց միջեւ վավեր ժամկետները, եւ այդ պատճառով 1920-ին կիրառելով այս Պայմանագիրը, անոնք մտահոգուած էին Օսմանեան կայսրութիւնը կիսող ներկայացուցիչներու ընտրութեամբ: Ուստի Սելիի դաշնագիրը վավերացումէն առաջ արդէն մէկ կամ մի քանի օգտագործման առարկա էր:

Թուրքիան, բախուելով կատարուած փաստերուն, յետագային 1923թ. Յուլիսի 24-ին կստորագրէ Լոզանի պայմանագիրը: Այս պայմանագիրով (յոդուած 25), որը շատ կարեւոր է Արեւմտեան Հայաստանի համար, Թուրքիան կը ճանչնար իր Նախկին տարածքի մասնատումը:

Արմենակ Աբրահամեան

Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի Նախագահ

Սելիի դաշնագրի ստորագրումը գործողութիւնն է, որը որոշեց Սուլթան Վահիդէթինը, այն սրբազան է



Արեւմտեան Հայաստան — Հուլիսի 22-ին Սուլթան Վահիդէթինի Նախագահութեամբ Սուլթանութեան խորհուրդը հանդիպեցաւ Յըլդըզի պալատին մէջ:

Սեւրի դաշնագիրը ընդունելու հիմնաւորումը, որուն կը մասնակցէին շուրջ 50 պետական գործիչներ, հրամանատարներ եւ համայնքի անդամներ՝ Ստամպուլի (Կոստանդնուպոլիս) անկումը կանխելն ու աւելի ծանր հետեւանքներու կանխարգելումն էր:

Ըստ Դամաթ Ֆերիտի, «գոյութիւն ունենալու» համար այլ լուծում չիկար քան Սեւրի դաշնագիրը ստորագրելը: «Եթէ կան մարդիկ, ովքեր կը նախընտրեն ձեռնպահ մնալ, անոնք կստորագրեն արձանագրութիւն՝ իրենց կարծիքը համառոտ բանաւոր կամ գրաւոր արտայայտելով», — ըսաւ ան:

Ըստ Հադի փաշայի, «աւելի լաւ է մեռնիլ» քան չստորագրել Սեւրի դաշնագիրը, այդ «ինքնասպանութիւն» է: Ինքնասպանութիւնը նոյնպէս մեղք է:

Ելոյթներէն ետք Սուլթան Վահդէթինն ըսաւ. «Անոնք, ովքեր կընդունին, ոտքի կանգնեն, անոնք, ովքեր չեն ընդունիր, նստած մնան»: Բոլորը ոտքի կանգնեցին:

Միայն Թոփչու Ֆերիկի Ռիզա փաշան յայտարարեց, որ «ձեռնպահ կը մնայ», չնայած իր կայուն դիրքին:(Akşin, ibid, p. 184-185)

Սեւրի դաշնագիրը ընդունուեցաւ Սուլթանութեան խորհուրդին հրաւիրուած 43 անձերէ 42-ի կողմէ, ներառեալ Սուլթան Վահդէթինը:

Հանդիպման նախօրէին՝ Զուլիսի 21-ին, Բրիտանիայի խորհրդարանի Լ.Ջորջը յայտարարեց, որ «Թուրքիան այլեւս չիկայ ...»: (Akşin, ibid, p. 185)

Հադի փաշան, Ռիզա Թեֆիկը եւ Ռաշադ Հալիսը կազմեցին օսմանեան պատուիրակութիւն՝ 1920-ի օգոստոսի 10-ին մեկնելու եւ ստորագրելու Փարիզի արուարձաններէն մէկի՝ Սեւրի, ճենապակեա գործարանի սալիկապատ սենյակին մէջ, բոլորին յայտնի Սեւրի պայմանագիրը Սուլթանի որոշմամբ: (Հոդուած 4. Անոր վեհափառութիւնը սուլթանը, որպէս գերագոյն խալիֆա, մահմեդական կրոնի պաշտպանն է):

Սահմանադրօրէն. Օսմանեան Սահմանադրութիւնը (խորհրդարանական միապետութիւն) ուժի մէջ էր մինչեւ 1921 թուականը, երբ այն փոխարինուեցաւ Անկարայի նոր հանրապետական կառավարութեան կողմէ կազմուած նոր Սահմանադրութեամբ: Առաջին ժամանակաւոր Սահմանադրութիւնն այնուհետեւ ստեղծուեցաւ 1921 թուականի Զունուարի 20-ին օրէնքով: 1922-ի Զոկտեմբերի 30-ին սուլթանութիւնը վերացաւ:

Հատուած Օսմանեան Սահմանադրութիւնէն, Զոդուած 7.

Նորին Մեծութիւն Սուլթանը իր ինքնիշխան իրաւունքներէն կը համարէ հետեւեալները. Ան կը նշանակէ եւ կազատէ նախարարներուն պաշտօնէն, կը փոխանցէ անոնց իր կարգադրութիւնները, կը ներկայացնէ գործառնութիւնն ու կազմուածքները, ան միջոցներ կը տրամադրէ արտոնեալ մարզերու ղեկավարներուն՝ անոնց տրուած արտոնեալ պայմաններով որոշուած ձեւերով. անոր պատկերը կը դրոշմեն արժոյթին, անոր անունը կարտասանեն մզկիթներուն մէջ հասարակական աղոթքի ժամանակ: Ան պայմանագրեր կը կնքէ լիազօրներու հետ, ան պատերազմ կը յայտարարէ, ան խաղաղութիւն կը հաստատէ, ան կը գլխաւորէ ցամաքային եւ ծովային բանակները, ան կը հրամայէ սկսիլ ռազմական շարժումներ: Ան կը կիրառէ Շարիաթ (սուրբ օրէնքը) եւ օրէնքներու դրոյթները. Ան կը կազմէ վարչական եւ հասարակական կանոնակարգերը, ան կը դատապարտէ կամ կը մեղմացնէ հանցագործներու դատաւճիռները, ան կը գումարէ Գլխաւոր ասամբլեա. կը լուծարէ, եթէ անհրաժեշտ կը համարէ, պատգամաւորներու պալատը:

Հետեւաբար, խիստ սահմանադրական եւ իրաւական տեսակէտէն, դաշնագիրը ստորագրելու մասին սուլթանի որոշումը, համարժեք է Օսմանեան կայսրութեան եւ, հետեւաբար, նաեւ այսօրուայ Թուրքիոյ կողմէ Սեւրի դաշնագիրը վավերացնելուն: Այս որոշումը սրբազան է:

2020 թուականի հոկտի 24-ին, որպէս Սուլթանութեան խորհուրդի կողմէ Սեւրի դաշնագիրը ստորագրելու որոշման հարիւրամեակի մէկ մասը, տեղի ունեցաւ առաջին կրօնական ծառայութիւնը՝ հազարաւոր հաւատացեալներու եւ նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի ներկայութեամբ Կոստանդնուպոլիսի Սուրբ Սոփիայի տաճարին մէջ:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողով (Խորհրդարան)

Շնորհաւորական ուղերձ ԱՀՀ ԱԺ-ի կողմէ

ԱՀՀ ԱԺ, 04 Յուլիս 2020թ

ԱԺ-ն հպարտութեամբ կը յայտն է, որ Ֆրանսիայի Ստրասբուրգ քաղաքի քաղաքապետին 2020թ. ընտրութիւններուն յաղթեր է «Եւրոպա, Էկոլոգիա, կանաչներ» կուսակցութեան ցուցակը գլխաւորող Ժաննա Բարսէղեանը:

Տիկին Բարսէղեանը արեւմտահայ ազգային գործիչ Սարգիս Բարսէղեանի՝ որուն 1915թ. թուրքական իշխանութիւնները ձերբակալեցին ու սպանեցին, եւ թուրքական ջարդերէն փրկուած, իսկ այնուհետեւ 1918-1920թ.թ. Հայկական Հանրապետութեան ԱԺ-ի Դաշնակցութեան կուսակցութեան կողմէ պատգամաւոր ընտրուած ՝ Պերճուհի Բարսէղեան-Պարտիզպանեանի ծոռնուհին է, որուն ընտանիքը միլիոնաւոր հայերու ճակատագիրը կիսելով, թուրքական ջարդերէն ետք հանգրուանած է Ֆրանսիայի մէջ:

Ինչպէս ամէն տեղ, հանգրուանած են Արեւմտեան Հայաստանի հայերը, որոնք իրենց կեներով կը կրեն քաղաքակրթութեան սերմերը դարձեր են օրինապաշտ քաղաքացիներ ու մասնակցած են իրենց հիւրընկալած երկիրներու բարգաւաճմանն ու զարգացմանը:

ԱՀՀ ԱԺ-ն իր ջերմ շնորհաւորանքներն ու բարեմաղթանքներն կը հղէ տիկին Ժաննա Բարսէղեանին, համոզուած,որ ան բարձր կը պահէ Ֆրանսիոյ քաղաքացիի պատիւը եւ պատուով կը կատարէ քաղաքապետի իր պարտականութիւնները, չի մոռնալով ներգրավուլ իր Հայրենիքի՝ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան կառուցման ու բարգաւաճման աշխատանքներուն:

Մէկ անգամ եւս կը շնորհաւորենք Արեւմտեան Հայաստանի «միլիոնաւոր զաւակներէն մէկուն» զաւակին՝ Ժաննային, ակնկալելով յետագայ սերտ համագործակցութիւն:

**ԱՀՀ ԱԺ Նախագահ
Լեոնարդո Բասմադեան**

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողով
(Խորհրդարան)

ԱՀՀ ԱԺ Ցաւակցութիւն կը յատնէ Թեսսա Յոֆֆմանին

Ցաւակցական

ԱՀՀ ԱԺ-ն իր ցաւակցութիւնն կը յայտնէ գերմանացի գիտնական, Բեռլինի Ազատ համալսարանի գիտ. աշխատող, 1979թ. «Սպառնալիքի տակ գտնուող ժողովուրդներու պաշտպանութեան ընկերակցութիւն» միջազգային իրաւապաշտպան կազմակերպութեան նախագահութեան անդամ եւ համակարգիչ խումբի ղեկավար՝ ով բազմաթիւ անգամ հանդես եկած է թուրքոյ կողմէ հայերու հանդէպ իրականացուած ցեղասպանութեան ճանաչման պահանջով եւ ունի բազմաթիւ գիրքեր ու աշխատանքներ այդ նիւթի շուրջ, տիկին Թեսսա Յոֆֆմանին՝ իր սիրելի ամուսնու՝ Լամբրո Սավվիդիսի մահուան կապակցութեամբ:




Հարգելի տիկին Յոֆֆման, մենք կը մաղթենք Ձեզ տոկունութիւն եւ համոզուած ենք ՝ Դուք կը յաղթահարեք Ձեզ վրայ հասած մեծ վիշտը:

Առողջ եղէք:

**ԱՀՀ ԱԺ Նախագահ
Լեւոնարդո Բասմադեան**

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողով
(Խորհրդարան)
Կրթութիւն եւ գիտութիւն

2020 թուականի գրական մրցանակակիրներ



Փաթիլիա Աբրահամեանի «Փոքրիկ շրջանակը» վերնագիրով պատմուածքը (Evidence Editions) արժանացեր է «Երիտասարդներու Թանաք եւ բառեր» մրցանակին:

Դեկտեմբերին փոքր տնակի մէջ, որտեղ կապրէր ընտանիք մը, Սուրբ Ծնունդի կը պատրաստուէին: Չնայած սահմանափակ միջոցներուն, երկու փոքր քոյրերը որոշեցին պատրաստել փոքրիկ շրջանակ մը՝ իրենց ծնողներուն նուիրելու համար, չկասկածելով նոյնիսկ, որ Սուրբ Ծննդեան մոգութիւնը կը յավերժացնէ անոնց նուերը:





Շաբաթ 01 Օգոստոս 2020 - Թիւ 22

Հրատարակչութիւն՝

Արեւմտեան Հայաստանի
Հաղորդակցութեան Նախարարութիւն

Հետադարձ կապ
contact@western-armenia.eu

Օժանդակեցեք Արեւմտեան Հայաստանը

WESTERN ARMENIA FOUNDATION

CNA

RIB : 30004 00066 00010033378 67

IBAN : FR76 3000 4000 6600 0100 3337 867 - BIC : BNPAFRPPMAS